

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վնասված չըմանի համար հոգատարութիւն.
— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հիպնոսիզմը եւ
ներշնչական բժշկութիւնը. Նամակ Ալեքսանդրո-
սիին. Նամակ Բաթումից. Նամակ Խմբագրու-
թեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարս-
կաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Նոր հրատարակութիւններ վենետի-
կում:

ՎՆԱՍՎԱԾ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՐԱՏԱ-
ՐՈՒԹԻՒՆ

Մենք յայտնեցինք, որ կառավարու-
թիւնը, ուշադրութեան առնելով Ախալ-
քալքի դաւաճի գիւղացիների վիճակը,
համաձայն է բայց թողնել փոխարինա-
րար 40,000 ռուբլի գումար՝ վնասված
գիւղացիների համար սերմացու և գիւ-
ղատնտեսական ուրիշ պիտոյքների հոգա-
լու նպատակով: Թիֆլիսի նահանգապետը
արդէն արել է համապատասխան կարգա-
դրութիւններ՝ տեղեկութիւններ ժողովու-
րու անբերրիութիւնից վնասված գիւղե-
րում կարելի մեծութեան ու որակութեան
մասին և փոխարինարար տարու նրանց
անհրաժեշտ գումարները:

Ինչպէս յայտնի է, անբերրիութիւնից
վնասված գիւղացիների համար վերցված
էր 6000 ռուբլի այն գումարից, որ ժո-
ղոված է երկրաշարժից վնասված գիւ-
ղացիների օգնելու համար: Այդ վեց հա-
զար ռուբլու կէսը գործադրվեց սերմացու
գնելու, իսկ միւս կէսը բաժանվել է և
բաժանվում է այն չքաւոր ընտանիքների
մէջ, որոնք անկարող են իրանց սեփական
միջոցներով հայթայթել իրանց ապ-
րուհարը:

Այնուհետև մասնաւոր նուիրատու-
թիւնների միջոցով սկսեցին ժողովել նոր
գումարներ կարօտ գիւղացիներին օգնելու
նպատակով: «Մշակի» խմբագրութիւնը իր
արած ժողովարարութիւնից յանձնեց Թիֆ-
լիսի նահանգապետին 4000 ռուբլի: Կան
ստացված նուիրատուութիւններ և մի քա-
նի ուրիշ հիմնարկութիւններից:

Թէեւ այս տարի գարունը շատ վաղ ըս-
կալից և ցանքերը շուտ տեղի ունեցան,
սակայն դեռ էլի մի քանի շաբաթ կարելի
է սերմանել դաշտերը: Յանկարի է, որ վը-
նասված տեղերի գիւղացիները օգտվէին
դէպքից և ընդարձակէին իրանց ցանքա-
րը, գերադասութիւն տալով այնպիսի բոյ-

սերի, որոնք քիչ են վնասվում միջոցառ-
մից:

Եթէ որ և է պատճառով չաջողվեց դար-
նանացանը ընդարձակել, այն ժամանակ
պէտք է պատրաստվել և վաղորօք հողը
մշակել աշնանացանի տարածութիւնը
ընդարձակելու յաջորդ տարվայ համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՊՆՈՏԻԶՄ ԵՒ ՆԵՐՇՆՉԱԿԱՆ ԲԺՇԿՈՒ-
ԹԻՒՆ

(Նամակ Խմբագրութեան)

Հիպնոսիզմի մասին, ինչքան մեզ յայտնի է,
հայերի մէջ առաջինն է եղած բժիշկ Վ. Ար-
ծրունին, որ գրած է «Մուրճ» ամսագրում դեռ
1891 թ. եւ որը առանձին բրօշուրով էլ ար-
տատված է նոյն ամսագրից:

Մեր նպատակից դուրս է հիպնոսիզմի պատ-
մութեան վրա կանգ առնելը կամ հիպնոսիզ-
մի միւս երեւոյթների մասին խօսելը. մենք
դրա համար խորհուրդ ենք տալիս կարգա-
յարգելի բժշկի «Հիպնոսիզմ» գրքովը, որը
գնահատելի աշխատութիւն է և հետաքրք-
րելովդներին դժնայում կը տայ. սոյն յօդու-
ածով համառօտ և կարելի եղածին չափ պարզ
լեզուով պիտի խօսենք, թէ ինչ է հիպնոսիզմը
և ինչպիսի հիւանդութիւններ կարելի է բը-
ժշկել նրա միջոցով:

Հիպնոսիզմը, մարդկային մագնետիզմը, ներ-
շնչական բժշկութիւնը, մագնետիկ բժշկու-
թիւնը եւ այլն, բնութեան ոյժեր են, որոնց
եթէ մենք իմանանք գործ դնել, մեղանից կը
հեռացնենք շատ դժբաղդութիւններ:

Հիպնոսիզմը մի գիւտ է, նա այս կամ այն
տաղանդի արտադրութիւն է. նա մի բնական
ոյժ է, որը մարդկութեան յայտնի է դառած
գիպոսածներով: Նա նոյնքան հին է, ինչքան
պատմութիւնը: Հիպնոսիզմով բժշկութիւններ
կատարում էին հին ժամանակներում ևս, այդ
տեսակ բնական բժշկութիւնն հին երբայն-
ցիների մէջ յայտնի էր: Բրիտիշ-Մուզեումում
կայ Տէքէթից բերված մի չիրիմ, որի վրա փո-
րագրված են երկու մարդկանց նկարներ, միւր
նստած աթոռի վրա, միւսը նրա առաջ կանգ-
նած, իր երկու ձեռքերով քսուհներ (passes) է
անում: Հիպնոսացնելու մի ձև է՝ որ այժմեան
հիպնոսիստներն էլ են գործ դնում: Հիպնո-
սիզմը այժմ գլխաւոր ուշադրութեան առար-
կայ է դարձել, որովհետեւ գիտութիւնը եւ
ժողովրդային միտքը այժմ աւելի պատրաստ
են աւելի ընդունող է Տարակոյտ չը կա, որ
հիպնոսիզմը են նրա յարակից միւս թաղուն
(occult) գիտութիւնները կամաց-կամաց պիտի

ժողովրդականանան եւ դառնան առաջնորդ եւ
ոյժ մարդկային ընտանիքում:

«Հիպնոս» յունարէն բառ է և նշանակում է
քուն: Այդ քունը ֆիզիոլոգիայէս ոչինչով չէ
տարբերվում բնական քնից: Հիպնոսական
քունը առաջ է բերվում ենթակայի ուշադրու-
թիւնը քնի վրա ուղղելով: Երբ որ ուշա-
դրութիւնը մտնողովին կենտրոնացրած է,
հիպնոսական քունը կատարեալ է, կամ եթէ
հիպնոսական քունը կատարեալ է, ապա ու-
րեմն ուշադրութիւնն է ամբողջապէս կենտրո-
նացրած: Հիպնոսական քնի մէջ չը կայ ա-
ռանձին, տարբեր զգացողութիւն, բացի այն,
որ առաջանում է հիպնոսիզմի երեւակայութեան
մէջ կամ հիպնոսիստի առած ներշնչումներով:
Թուում է, թէ մեր գլխում կան երկու մաս-
նաւոր գործարաններ և, կարծես, այդ գործա-
րաններից մէկի պարտականութիւնն է գործել,
որպէս մտքի պահակներ: Ինչ որ մտնի այդ
գործարանների մէջ, պահակները քնում են:
Եթէ մի բանի սխալ լինելը հաւատացած են,
գիմարդում են, եթէ ճշմարիտ է, ընդունում
են: Այդ գործարանները կոչվում են մտքի
դիմադրող գործարաններ (objective):

Մտքի միւս գործարանները, որոնք կոչվում են
ենթարկվող կամ ընդունող գործարաններ (sub-
jective), միայն ընդունում են, չեն դիմադրում:
Այդ ընդունող գործարանները, սակայն, չեն
ընդունում այն բոլոր, որ իրանց բարոյա-
կան կարակտերին հակառակ է:

Հիպնոսիստը քսուհներով (passes կամ sense
stimula), համոզելով կամ հրամայելով այդ
պահակին մի կողմ է անում և ինքը մտնում
ներս, ապա ժամանակաւոր կերպով իր կոնտ-
րոլի ներքոյ առնում ընդունող գործարաններին:

Մտքի եւ ներկայիս սիստեմի վրա նա մի
եւ նոյն ազդեցութիւնն ունի, ինչպէս բնական
քնի վրա: Հիպնոսական քունը հանգիստ և
հանդարտ գրութիւն է, որ շատ զէպքերում
շատ օգտակար է և ամեն մարդի անվնաս: Հիպ-
նոսական քունը բոլոր բոլորի մէջ ամենա-
քունն է և ոչ մի վատ հետեւանք նա
չի առաջացնի. դա հաստատված է հազա-
րաւոր փորձերով և, համարեա, բոլոր հիպ-
նոսիստների կողմից: Ոմանք երկիւղ են կը-
րում, թէ քնուց յետոյ չեն զարթնի. դա բո-
լորովին սխալ ենթադրութիւն է. նախ՝ հիպ-
նոսիստը նրան, ենթակային, կարող է հեղու-
թեամբ արթնացնել, երկրորդ՝ սա բնական,
բայց արուեստական կերպով առաջացրած քուն
է, որ եթէ այնպէս էլ թողնվի, ենթական ին-
քն իրան երկու-երեք ժամից յետոյ անպատ-
ճառ զարթնելու է:

Հիպնոսիզմի ամեն ոք կենթարկվի, բացի ե-
րեք տարեկանից պակաս երեխաներից: Առաջ

կարծում էին, թէ միայն տկար կամք ունե-
ցողներին, հիւանդներին, ներկային անհատ-
ներին, հիստերիկ կանանց կարելի է ենթարկել
հիպնոսիզմի, բայց վերջին փորձառութիւնները
դրա հակառակը ցոյց տուին. առողջներին,
կամքի ոյժ ունեցողներին աւելի հեղուկեամբ
կարելի է ենթարկել հիպնոսիզմի, որովհետեւ
վերջիններս աւելի կարող են իրանց միտքը
կենտրոնացնել:

Հիպնոսիզմը, որպէս միջնորդ բժշկութեան,
բացատրելու համար հարկաւոր է գրել առան-
ձին խոշոր գիրք. մենք պիտի բաւականանանք
միայն նրա միջոցով կատարված բժշկութիւն-
ների մասին խօսելով:

Ներշնչական բժշկութիւնը (Suggestive The-
rapeutic) այն բժշկութիւնն է, որ հիւանդին
ընայնելով (հիպնոսացնելով) կամ շատ զէպքե-
րում առանց քնեցնելու էլ (երբ, ի հարկէ, երկու
զէպքերում էլ նրա գիտակցական միտքը, դի-
մադրող միտքը չէ գործում), այդ դրութեան
մէջ ազդում են նրա մտքի վրա. իսկ մարմինը
արդէն ազդում է մտքից:

Ներշնչական բժշկութիւնով կարելի է բժշկել
մասնաւորապէս ներկայիս հիւանդութիւնները,
բայց անվախ կերպով կարելի է նրան գործ
դնել բոլոր մարդկային հիւանդութիւնների
դէմ. հիպնոսիզմը առաւել կամ նուազ չափով
կօչնէ ամեն հիւանդութեան: Նա երբեք, ոչ
մի զէպքում, ամենաչինչ վնաս անգամ չի ա-
ռաջացնի, եթէ կը կատարվի մասնագէտի
կողմից:

Որպէս զի մեր միտքը աւելի հասկանալի լի-
նի, աւելորդ չենք համարում տալ մի քանի
հիւանդութիւնների անուններ, որոնց կարելի
է բժշկել հիպնոսիզմի միջոցով (ներշնչական
բժշկութեամբ):

Անքնութիւն (insomnia), թոթովախօսու-
թիւն, օնանկում, բէլմադիմ, դժուարամար-
սութիւն, խրօնկական փորկապութիւն, հազ,
բրօնխիտ, կատար, աստմա, օտրի բաւարիւն,
անդամալուծութիւն, ողբից ընկելը, ծխա-
խոտ, մօրֆին գործածելու սովորութիւններ,
ընկնաւորութիւն (epilepsy), աչքի հիւանդու-
թիւններ, ծանր լսողութիւն, հիստերիա, ա-
մաչկոտութիւն, խրօնկական գլխացաւ, լուս-
նոտութիւն և այլն:

Ամեն մի հիպնոսիստ իր պրակտիկայի մէջ
հիպնոսական ներշնչմամբ բժշկած ունի վերո-
յիշեալ հիւանդութիւններից: Բէրնհէյմը Նան-
սիւմ հիպնոսական ներշնչմամբ բժշկած է
աւելի քան 1200 հիւանդներ. դոկտօր Վէտ-
տէրստէնը Ստոկհօլմում—7000 հիւանդու-
թեան զէպքեր և այլն: Ի հարկէ հիպնոսական
ներշնչմամբ չէ կարելի կտալու ոտքը նորոգել
կամ մօրթի մէջ խրված աւելորդ դուրս բերել:

Իր առարկայ դարձած գործ: Հայ ընտանիքնե-
րում անփոփոխ տիրապետում է օտար լեզուով
հրատարակութիւնը: Ո՞վ պիտի նրա կողքին
դնէ եւ հայերէնը:

Երկու փորձ ցոյց են տալիս, որ այդ բանը
հեղուկեամբ են պատուով կարող է կատարել
վենետիկի Միքիթարեան տպարանը: «Մշակ»
ընթերցողներին յայտնի է այդ տպարանից
լոյս հանած «Որբունի» չքեղ հրատարակու-
թիւնը: Նորից չենք խօսում նրա մասին, մա-
նաւանդ որ գիտենք, որ նա լաւ տարածվում
է նաեւ ուսանալիքի մէջ և, ուրեմն, շատե-
րը տեսած կը լինեն այդ գեղարուեստական
հրատարակութիւնը: Նորերս վենետիկում հրա-
տարակվեց «Գեղունի» անունով մի սովորակ,
որ իբրեւ նուէր ուղարկվեց «Բազմալեզու»
բաժանորդներին:

Ահա այդ երկրորդ գործի մասին ենք ու-
ղում երկու խօսք ասել:

«Գեղունի» էլ, ինչպէս և «Որբունի»,
պէտք է նկատել իբրեւ գեղարուեստական և
ոչ թէ գրական հրատարակութիւն. այդպէս է
ասում և «Բազմալեզու» խմբագրութիւնը:
Իբրեւ գեղարուեստական հրատարակութիւն,
նա շատ վայելուչ, նոյն իսկ գեղեցիկ է: Եթե
առանձին թերթերի վրա տպված պատկերները

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

II

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Գեղարուեստը մեզանում չատ է կաղում
և սա—չը դարձնում—մի պատմական ճակա-
տագիր է մեզ համար: Մի կողմ թողնենք գե-
ղարուեստական գրականութիւնը: Այս ճիւ-
ղում առաջադրվում համար հայերը պիտի ու-
նենան շատ տաղանդներ, իսկ եթէ տաղանդ-
ներ մեզանում չը կան կամ, ամենաշատը, չա-
փազանց հազուադէպ են—այստեղ աղբիւր
մենք ոչինչ չենք կարող անել և պիտի միայն
գանգատուենք երկնքին, որ նա քիչ է ուղար-
կում մեզ իր կայծերից:

Բայց ինչով կարող ենք արդարանալ այն
զէպքում, երբ գեղարուեստական գործը մե-
զանում կարող է գլուխ դալ առանց երկնային
կայծերի եւ, այնուամենայնիւ, գլուխ չէ դա-
վալ վերջեքէ հէնց տպագրութիւնը: Տարիներ
են անցնում, և հայ ընթերցողի սեղանի վրա
չէ երեւում մի փոքր ի շատէ գեղեցիկ գիրք:

Այստեղ հօ մեզանից ոչինչ մեծ ընդունակու-
թիւն չէ պահանջվում. բաւական է միայն
օգտվենք տեխնիկայի առաջադիմութիւնից:
Շքեղ թուղթ, պատկերներ, տպագրական մե-
քենայ, տառեր—փոքր Աստուծու, սրանցից
ոչ մէկն էլ կարօտ չէ հայկական հանձարին,
որպէս զի կատարելութեան հասնի: Ամեն ինչ
պատրաստվում է օտարների ձեռքով, ուղարկ-
վում է մեզ: Ի՞նչ է պահանջվում մեզանից: Լի-
նել ուշադիր մարդ, դառնալ ընդունակ արհես-
տաւոր, նմանվել ուրիշներին:

Այդքան էլ չենք կարողանում: Յիսակաւ
թւականներին մի խումբ հայեր Պարիզում յե-
ղափոխութիւն մտցրին հայկական տառերի
ձեւի մէջ. գեղեցիկացրին, եւրոպական ճաշակ
հաղորդեցին նրանց և լոյս հանեցին մի շարք
հրատարակութիւններ, որոնք այսօր էլ պիտի
համարվեն սեղանի զարդ դառնալու արժանի
գործեր: Բայց նրանք մեռան և նրանց պատ-
րաստած տառերը հետզհետէ դուրս եկան գոր-
ծառութիւնից և մենք դարձեալ տձեւութեան
ու անշնորհքութեան մասնեցինք: մեր տպա-
րանական գործը: Ապացոյց այն գրքերը, որոնք
հրատարակվում են Թիֆլիսում, այն տառերը,
որոնց մեզ համար պատրաստում է հայոց տա-
ռերին միանգամայն անձանթ մի գերմանացի:

Թող ընթերցողը երկրորդական, անհարկա-
ւոր բան չը համարէ այս իրողութիւնը, որ
մենք դնում ենք նրա առջեւ, Մեր անձաշակ
հրատարակութիւնները, մեր տղեղ գրքերը մեր
յետադիմութեան պարզ նշաններն են: Մեր
ժամանակներում տպարանական հրատարակու-
թեան արտաքինը ունի կարեւոր նշանակու-
թիւն. նա նպատակ է գրքի տարածման, նա
ճաշակ է զարգացնում, կարողացնել է տալիս:

Աւելորդ է ասել, թէ ինչ նշանակութիւն ու-
նեն մանաւանդ պատկերազարդ հրատարակու-
թիւնները: Նայեցէ՛ք ձեր շուրջը, տեսէ՛ք թէ
արտասահմանի եւ Ռուսաստանի քանի քանի
պատկերազարդ հրատարակութիւններ կան,
որքան են նրանք տարածվում ընտանիքներում,
որքան միջելի են գեղեցիկասէր մարդկանց:
Իսկ գեղեցիկը սիրել—յատուկ է ամեն մար-
դու:

Եւ սակայն մենք չունենք այնպիսի հրատա-
րակութիւններ, որոնք «գեղարուեստական»
կոչվելու արժանի լինէին: Միայն հանդուցեալ
Միմէ՛ծն Գուլամիրեանցն էր, որ մի—մի հրա-
տարակում էր իր «Արաքսը». մեռաւ նա, և
գեղարուեստական հրատարակութիւնը մեզ
համար դարձաւ անմատչելի, անհասկանալի
բան կամ չարչիների ձեռքով ցեխտալած, ծաղ-

բայց հիպոստիզմով կարելի է նրա ցաւը բոլորովին հեռացնել, երբ հիւանդի քնած դրութեան մէջ նրան հնարաւոր լինի համոզել, թէ արդէն ասեղը դուրս է հանված մանց: Հիպոստիզմը առաւել կամ նուազ չափով կօզնէ ան բոլոր հիւանդութիւններին, որոնք նիւթապէս փշաջած չեն:

Վերոյիշեալ բոլոր հիւանդութիւնները կարելի է եւ աջող կերպով բժշկել նոյն իսկ առանց հիպոստիզմի (քնեցնելու), մազնետիզմով: Մենք մազնետիզմի մասին կը խօսենք ուրիշ անգամ:

Հիպոստիզմով կամ մազնետիզմով կատարված բժշկութիւնը բոլորովին բնական բժշկութիւն է եւ երկու դէպքումն էլ զեղեր գործ չեն դրուում:

Ինչպէս վերեւ ասացինք, հիպոստիզմը քնած հանգիստ եւ խաղաղ դրութիւն է, բացարձակապէս ազատ բոլոր վտանգաւոր ազդեցութիւններէն: Հիպոստիզմը չի թուլացնի եւ թակալի կամքը, ոչ էլ նրա մտաւոր կարողութիւնը, այլ դրա բոլորովին հակառակը՝ թոյլ կամք եւ միտք ունեցողներին կուժեղացնէ:

Հիպոստիզմի եւ թագուն (occult) գիտութիւնների մէջ չը կայ ոչ մի գերբնական բան, այլ բնութեան օրէնքների պարզ գործառնութիւն, որոնք ներկայութեւս ճանաչված են ամենից առաջադէմ գիտնականների կողմից: Այսպիսի բնական օրէնքների գոյութիւնը հաստատված է բոլոր տեղերից կառավարվում է եւ կառավարված է բնական օրէնքով:

Հիպոստիզմ եւ մազնետիզմ-բժշկի
Յարութիւն Շէքերյեան

ՆԱՄԱԿ ԱԼԷԳՍԱՆԴՐՈՊՈԼԻՃ

Ապրիլի 18-ին

Երէկ, ամսիս 17-ին, երեկոյեան գնացքով Վեհափառն այստեղից մեկնեց Սանահին: Ուղեկցում էին՝ Գարեգին, Կորին եւ Մատթէոս վարդապետները: Վերջինը, հիւանդութեան պատճառով, կը մնայ այստեղ մի քանի օր եւ կազդուրվելուց յետոյ կը վերադառնայ էջմիածին: Մատթէոս վարդապետի մնալը մեծ անհանգստութիւն պատճառեց քահանաներին, որոնք իսկոյն ժողովուրդին ի միասին՝ խորհելու համար, թէ ինչ պէտք է անեն, եթէ Մատթէոս վարդապետը մշտական այստեղ մնալու լինի...

Ի միջի այլոց, այս անգամ Վեհափառն տըւին երկու խնդրք. մէկը՝ տեղիս քաղաքային աղքատներին հոգաբարձութիւնը, որը ներկայացաւ Վեհափառն իր ամբողջ կազմով, իսկ միւսը՝ մի խումբ քաղաքացիների: Առաջինը խնդրում էր Վեհափառից իրան տալ նախկին հայոց աղքատանոցից՝ մնացած 3000 ռուբլի դրամագումարը եւ նրա կրպակները եւ կամուտը:

Այդ անտեղի եւ անհիմն խնդրքը, որ երկրորդ անգամն է կրկնում հոգաբարձութիւնը Վեհափառն, մեր կարծիքով, այս անգամ եւս կունենան նոյն հետեւանքը, ինչ որ ունեցաւ եւ առաջինը: Ամենայնիւ, ինչպէս մենք կարողացանք իմանալ հաստատ աղբիւրից, այն կը լինի, որ առայժմ նրանք կը ստանան տարեկան 200 ռուբլի նպաստ, ինչպէս մինչեւ այժմ ստացել են Մատթէոս վարդապետի կարգադրութեամբ, այն էլ այնքան ժամանակ,

չափ մաքուր են, տպարանական արհեստի մեծ առաջադիմութիւն են ցոյց տալիս: Նրանք տպագրված են զանազան գոյներով, որոնք ճաշակ, նրբութիւն են ներկայացնում: Այդտեղ մենք տեսնում ենք նկարիչ Այվազովսկու, Պետրոս Աղամանյանի (Արքայ լիւրի), Համբարձումի եւ Օթելլոյի գերեզման) պատկերները: Տեսարանների մէջ շատ հետաքրքրական եւ գեղեցիկ է մանաւանդ մէկը, որի տակ կարգում ենք. «Հարսանիք Տարօնի մէջ»: Նա տանում է մեզ Թիւրքաց Հայաստանի հայաշատ անկիւններից մէկը. երեսը ծածկած հորսը, չըրկապատված կանանցով, երկու պարող տղամարդիկ եւ ծերունի քահանան շատ ինքնատիպ մի տեսարան են տալիս հայոց կեանքից:

Չենք կարող ասել, թէ «Գեղունիք»-ի բոլոր պատկերները նոր են, յատկապէս այդ հրատարակութեան համար պատասխանված: Ո՛չ, մեծամասնութիւնը, եթէ ոչ բոլորը, նոր արտատպութիւն է: Բայց եւ այդպէս, թուովը ու տպագրութիւնը ամբարն լաւ են, որ հաճելի են դարձնում նոյն իսկ արտատպութիւնը:

Հրատարակութիւնը ունի եւ գրական բաժին, որ նոյնպէս արտատպութիւններից է բաղկացած: Այդտեղ մենք տեսնում ենք նախ

մինչեւ որ արդէն ծրագրված «Ժողովական աղքատանոցը» Բարձրագոյն թղթաւթեմքը կը բացվի Ալեքսանդրապոլում հոգեւոր իշխանութեան հսկողութեան տակ:

Գիւմ.

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՃ

Ապրիլի 16-ին

Երէցփոխ պ. Ս. Յարութիւնեանի ժամանաւոր արդէն լրացած լինելով, եկող կիրակի, 22-ին, ծխականների ընդհանուր ժողով պէտք է դուստարվի՝ նոր երէցփոխ ընտրելու համար: Այդ ընտրութիւնը աւելի քան կարեւոր է նախորդ տարիների ընտրութիւններից: Ներկայ ընտրութիւնից է կախված այն նոր կարգերի հաստատ իրականացումը, որոնք մտցրված են մեզանում: Այն ինչպէս:

Նոր կարգերի համաձայն՝ եկեղեցում գանձանակ չը պէտք է պտտեցնէին, բայց այսօր պտտեցնում են, այն էլ մէկի տեղ երեքը, թէեւ ոչ քահանաների անունով (տիրացունների, էջմիածնի, եկեղեցու եւ այլն): Ծխականատարութիւնների համար դասակարգով սահմանված վճարը ոչ թէ քահանաները պէտք է ստանան, այլ երէցփոխը կամ նրա կողմից նշանակված մի ուրիշը, անդորրագրեր տալով ներկայացնողին, որ սա էլ փողի տեղ տար քահանային: Բայց մինչեւ օրս հին ձեւով է կատարվում այդ բոլորը: Բայց այդ՝ քահանաները այժմ ոչ թէ երէցփոխից են ստանում իրանց ամսակաւոր, այլ նրանց մօտ ժողովված փողից՝ երբեմն պակաս եւ երբեմն էլ աւել, եկող ամսվայ հաշին: Մի խօսքով, գրեթէ ամեն ինչ տեղի է ունենում դարձեալ հին ձեւով՝ նորի անուն տակ: Նոյնպէս անհրաժեշտ է կարգ սահմանել եւ չափաւոր ու բարեխիղճ կերպով բաժանել երկու քահանաների մէջ կատարվելիք գործերը ի հարկէ, աչքի առջեւ ունենալով անհրաժեշտ դէպքերում բացառութեամբ Հակոբակի դէպքում, եթէ երկարելու լինի ներկայ ընտրված, անխուսափելի է, որ կրկին կը վերաստեղծվի հին քահանայական աղուկը:

Եւ իբրեւ, ինչպիսիք է տարբերվում ներկայ դրութիւնը Տէր-Կոստոյի ընտրվածից: Մենք հասարակութեան խաղաղութիւնը թանգ գնահատելով, միշտ լուր կընք այդ մասին, բայց ամեն բան չափ ու սահման ունի: Կարապետ քահանայ Մալխասեանցը տարիներով շարունակ եկեղեցուն սպասաւորութիւն անէ, իսկ Մելեանց քահանան ամիսներով բացակայէ քաղաքից եւ ճանապարհորդէ, ի հարկէ 2000-ը լրիւ տոսանով: Կարապետ քահանան ամբողջ քաղաքի հազարաւոր մարդկանց համար ծէսեր կատարէ՝ կնուք, պսակ, թաղում եւ այլն, իսկ Մելեանցը ծաղկեայ փլոն ստանայ, որովհետեւ նա ազատ լինելով, այսինքն իրաւունք համարելով ազատ լինել, խառնվել է եկեղեցու շինութեան գործին: Որքան արագոր վարձատրութիւն: Մէկը եկեղեցու շինութեան գործին նպաստելով վարձատրվում է, իսկ միւսը նոյն եկեղեցու բոլոր պաշտօնակատարութիւնները (նաեւ Մելեանցի փոխարէն) կատարելով անուշադրութեան է մատուցում:

Ինչ եւ իցէ, սպասելով նոր երէցփոխի ընտրութեանը, մենք յայտ ունենք, որ Բաթումի հասարակութիւնը վաղօրօք կը մտածէ այնպիսի մի անձնաւորութիւն ընտրելու մասին, որը ընդունակ լինէր գործարկելու թէ նոր կարգերը, եւ թէ, ինչպէս վերեւ ասացինք,

եւ առաջ Հ. Ալիւանի «Հայ հայրենիք» ոտանաւորը: Ապա գալիս է Ռաֆայէլ Պատկանեան. զրված են պատկերներ—«Ռաֆայէլ Պատկանեան», «Պատկանեանի առանձնատեսնակը», «Պատկանեանի տունը եւ ընտանիքը», բերված են զանազան ժամանակ լրագիրներում տպված մի շարք յօդուածներ Պատկանեանի մասին, որոնց մէջ է եւ Գրիգոր Արծրունու մի առաջնորդող յօդուած: Պատկանեանին իր պատկերով հետեւում է հոշակաւոր կոմպոզիտոր Վերդին, ապա Միքայէլ Նալբանդեանի առեւ ու գերեզմանի պատկերները: Ամենից վերջը գրված է Վիկտորիա Աղանուրի պատկերը: Դա մի հայուհի է, որ խաղաղ լեզուով բանաստեղծութիւններ է գրում եւ շատ լաւ անուն է հանել իրեն բանաստեղծուհի: Հայագրէն չէ գրում եւ բերված են մի քանի թարգմանութիւններ նրա բանաստեղծութիւններից:

Մեզ հարկաւոր է ուշադրութիւնից չը հեռացնել «Որբունի» առթիւով յօդուածը: Դա խիստ ոճով գրված մի բանակոխ է այն հայ տիրացունների դէմ, որոնք մի ամբողջ վայրատուն էին բարձրացրել «Որբունի» դէմ լոկ այն պատճառով, որ հայ որբերի համար հաց եւ օգնութիւն խնդրող այս գեղարուեստական

խուսափելով ապագայում որ եւ է անախորժութիւններից, որոշ չափի ու ձեւի տակ կը դնէր քահանաների պարտականութիւնները, ի հարկէ ծխականների աջակցութեամբ:

Ծխական

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 17-ին

Որքան մեզ յայտնի է, Կուկիայի Նորաչէն ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխ Ն. Գրիգորեանի դէմ յարուցված է մեղադրանք զանազան զեղծումների մէջ: Թէ միտքը եւ թէ ծիսական ժողովում ձայների տաւալութեամբ պ. Գրիգորեանը վերընտրվեց երէցփոխ, սակայն կոնսիստորիան չէ կարող այդ ընտրութիւնը հաստատել՝ հատուր օրինաց XI. մասն I, յօդ. 1026-ի հիման վրա, եւ պ. Գրիգորեանը չէ կարող մեր եկեղեցու երէցփոխ լինել, մինչեւ որ նրա վրա բարձած մեղադրանքները չը վերանան եւ նա բոլորովին արգար չը ճանաչվի օրէնքի առաջ: Գրիգորեանը լիցիւն արժանահաւատ անձինք եւ ոչ երբեք անկեղծ ընդ դատաստանաւ եւ ընդ տուգանօք, կամ յայտնաբեր նախկին պաշտօնավարութեամբ իւրեանց իրեն անօգտակարք: (Կանոններ Վր. եւ Իմ. թիւ. 20): Քանի որ այդ գործին օրինաւոր ընթացք է տուած եւ քննութիւնը շուտով պէտք է զարգիլ զեղծումների խնդիրներով, կոնսիստորիան պարտաւոր է, մեր ընտրված, ամսիս 15-ին եղած ընտրութիւնը բեկնելու եւ երէցփոխի նոր ընտրութիւն նշանակել, համարելով Ն. Գրիգորեանի ընտրութիւնը անվաւեր:

Ս. Խարազեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 16-ին

«Մշակ» լրագրի № 75-ում տպված Ա. Ստեփանեանի նամակի առթիւով աւելորդ չեմ համարում երկու խօսք ասել:

Կաթողիկէ ս. Գէորգ եկեղեցու ծխականներին մի քանիսն յայտնի է, որ մեր երէցփոխ պ. Գ. Բայանուրեանը մտադիր է Զատիկի տօններից յետոյ եկեղեցու ներքին մասը բոլորովին նորոգել. դրա համար արանից մի քանի մարի առաջ յանձնված էր ճարտարապետ պ. Գրիգորեանին յիշեալ նորոգութեան նախահաշիւը կազմել, որպէս զի մօտ ապագային սկսվի շինութիւնը: Սրա համար էլ պ. Ստեփանեանցի ակնարկած պատուհանների կտրատված լինելու, ստակի մի քանի տեղերից թափվելու վրա ուշադրութիւն չէ դարձնում, որպէս զի միասին այդ բոլորը կատարվի:

Գալով նոյն եկեղեցու քահանաներից մի քանիսն անկայել արարաններին, որի մասին արդէն յիշված էր «Մշակում», այն է, թէ ներանցից մէկը ստատիկ ձեւով է ժամհարին եւ նրա կնոջը, այժմ հաստատ աղբիւրից լուսմ ենք, որ Թիֆլիսի առաջնորդը նոյն իսկ ձեւն լու օրը գործակալ Զարգիւյան քահանային էր ուղարկել այս գործը ստուգելու. գործակալը խիստ քննելով եղելութիւնը, յանգուր Դարեգին քահանայ Մատինեանցին «խրատել եւ արձակել է», որպէս զի ուրիշ անգամ էլ չը ձեւէ: Բայց ինչեքի ետեւից է ընկել, նոյն քաղաքործ քահանան Զատիկի առաջի օրը պատարագիչ էր ս. Գէորգում, վերաբերումի ժամանակ նա այնպիսի ծիծաղելի եւ երեւի անկայել խօսքերով ծիծաղեցրեց վերաբերիչ Կաթողիկան քահանային, որ վերջինս չը կարողանալով իրան զսպել, ընդհատեց հաւատաւոր ու ծիծաղով թափուկեց սեղանի ետեւ:

Հարցնում ենք. ո՞վ է մեղաւորը: Մենք, որ լուսմ ենք եւ ընդունում ենք նրանց, թէ հոգե-

գործի հրատարակողները Միթրեաններն են, կաթողիկ վարդապետներ, հետեւաբար նրանց այդ բարեխիղճական գաղափարը պիտի նզովենք եւ անէծքների ենթարկվի Հայաստանաց տիրացունների տեսակէտից: Մենք կատարելապէս արդարացի ենք համարում այն խիստ ոճը, որ «Բազմապէս» խմբագրութիւնը գործ է դրել հայոց ողբումի տիրացունների, մանաւանդ Զմիւռնիայի «Արեւելեան Մամուլ» հանդէսի դէմ: Հայոց ազգի հիմքերը ցնցող արեւնայի գծադրութիւնները բարձրացրել են մեզանում ամեն տեսակ միջնադարեան նկված եւ դարչնի հոտեր: Հէնց այն հանգամանքը, որ հայ տիրացուն լինելու է, թէ լաւ է որ հայ որբը քաղցից մեռնի, քան ազատվի բարեւոր օտարի ձեռքով,—այդ իսկ հանգամանքը կրկնում ենք, բաւական է, որ զգուանք յարուցանէ իսկաւոր ու բարբարոս մտքեր քաղաքացիների դէմ: Եւ Վենետիկի հայ վանքը երբեք իր լաւ ձեռնարկութիւնների մէջ չը պիտի ուշադրութիւն դարձնէ լուսահաշիւ վրա, որ որքան զգուելի է, այնքան էլ բնական...

Բայց «Գեղունիք»-մի անգամ էլ կրկնենք—մեզ չէ հետաքրքրում իրեն գրական հանդէս: Դիմենք դարձեալ նոյն հարցին—գեղարուես-

ւոր իշխանութիւնը, որ «խրատում ու արձակում է»...

Ծխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի, ապրիլի 18-ին, Թիֆլիսի Կրուժոկի դահլիճում երեքստասրդ բնադէտ վ. Լուսինովի կարգաց մի դասախօսութիւն երկրագնդի պատմութեան եւ վիճակի մասին: Դասախօսութիւնը գրաւել էր ունկնդիրների մեծ բազմութիւն: Մոգական լապտերի միջոցով դասախօսը տալիս էր իր պատմածներին չօչափելի եւ դիւրամատչելի ձեւ: Դասախօսութիւնը կազմված էր երեք բաժիններից: Առաջին բաժնում ընթերցողը հաղորդեց ընդհանուր տեղեկութիւններ տեղեկաբեր մասին, երկրորդում՝ արեւգահայտի համակարգութեան մասին, եւ երրորդում՝ մեր երկրագնդի կազմութեան մասին: Հասարակութիւնը ընդունեց դասախօսին անկեղծ եւ ոգեւորված ծափահարութիւն: Ներքի:

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը միջնորդութիւն է յարուցել երկրագործութեան եւ պետական կալուածների միջնորդութեան առաջ ուղարկելու Ախալքալաքի գաւառը մասնագէտներ, որոնք ուսումնասիրէին հատկնտեսական մուկի եւ հայաբնակների համար այլ վնասակար միջոցների կեանքի պայմանները ու տեղի ու տեղը մշակելի միջոցներ նրանց դէմ մաքառելու համար:

Մշակված են նոր կանոններ ժողովրդական ընթերցանութիւնների կազմակերպութեան մասին: Այդ կանոնները իրանց այժմեան ձեւում համեմատաբար աւելի հեշտացնում են ժողովրդական լսարանների բացումը, թող են տալիս ընթերցանութիւն ոչ միայն բուհերին, այլ եւ ճառախօսութիւններ (առանց գրքի) ու չեն սահմանափակում դասախօսների կազմը միայն հոգեւորականներով կամ ուսումնական վարչութիւնների մէջ ծառայողներով, ինչպէս կարծիք էր յայտնել ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը: Նոր կանոնների համաձայն ժողովրդական լսարաններում դասախօսութիւններ կարող են կարգաւ եւ կողմնակի անձինք, նախօրօք ստանալով կարեւոր թոյլտւութիւն:

Խարկովից հեռագրում են «Новостям» լրագրին, թէ կայսերական թատրոնների դերասանուհի Ն. Ա. Պապայեանից գողացված են մի քանի հազար ռուբլի արծեցող թանգազին իրեղէններ:

Դրամատէրների մի խումբ ձեռնամուխ է լինում հրատարակելու Մօսկվայում մի ամսագիր նոր հիմունքներով: Ամսագիրը պէտք է կոչվի «Звезда»: Նա լոյս կը տեսնի տետրակներով, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած կը լինի ոչ պակաս, քան 60 երեսից: Ամսագրի խմբագրութիւնը կը յանձնվի 9 հօգուց կազմված մի առանձին կոմիտէտի: Ամսագրի բոլոր աշխատակիցները միաժամանակ կը լինեն եւ նրա բաժնետէրերը եւ իրաւունք կունենան աստիճանաբար յետ գնելու հրատարակական բաժնիները: Ամսագրին աշխատակցելու համար մտադրութիւն կայ հրաւիրելու բոլոր նշանաւոր գրականագէտներին:

տական պատկերազարդ հրատարակութեան հարցին:

Խմբագրութիւնը յայտարարում է, որ «Գեղունիք» պիտի հրատարակվի «մերթ ընդ մերթ», առ այժմ իրեն նուէր: Հայ ընթերցողը միայն ուրախանալ կարող է այդ խօսքերից: Չէ կարելի չը չեղան այստեղ, որ այդպիսի կատարելագործված տպարան ունեցող Միթրեանութիւն կայ իր վրա: Նա առում է. «Ինչպէս որ մանք ըսին, անտարակոյտ մենք Եւրոպայի մէջ գեղեցիկն ու ճաշակաւորին մէջ ապրելով, աւելի ձեռնհաս ենք եւ աւելի դիւրութեամբ կարող ենք առատարկու հայ մեծից գեղարուեստական մասնաճիւղին, քան թէ միւս ազգային մամուլները» որ կը գտնուին յԱրեւելոյ:

Այն, ձեզ շատ ճիշդ են ասել: Մի պատկերազարդ գեղարուեստական հրատարակութիւն որ լոյս տեսնէր Եւրոպայում—դա շատ ցանկալի մի հիւր կը լինէր հայ ընտանիքի համար: Ուրեմն պէտք է փորձել: Եւ հաւատացած ենք, որ փորձը ապրողութիւն կունենայ: Մեր յետադիմութիւնը արդէն շատ է անհամեմատ հասել...

Լ.

0—100